ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/3975/02/24 ք. Երևան
6 Հունիսի 2024թ

Ծանոթանալով «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (*ՀՎՀՀ՝ 01254973, պետական գրանցման համար՝ 271.110.741775, Էլ. հասցե՝ pakhanyan.gnumner@mail.ru, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան Փ., շենք 1, 13/30., այսուհետ նաև՝ Հայցվոր կամ Ընկերություն)* ընդդեմ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության *(ՀՎՀՀ՝ 02507198, պետական գրանցման համար՝ 286.184.1026487 , հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կենտրոն, Հանրապետության Հրապարակ Կառավարական, շենք 3, այսուհետ նաև՝ Պատասխանող)՝* «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2024թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 3.2-րդ, 5.1-րդ և 5.2-րդ կետերով կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք Հայցվորի հայտը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին բավարարող գնահատելու և վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել պահանջի մասին հայցադիմումին,

ՊԱՐԶԵՑ

Հայցվոր «ԷՅՉ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ՝ «ՇՄՆ-ԲՄ-ԱՊՁԲ-24/14» ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2024թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության 3.2-րդ, 5.1-րդ և 5.2-րդ կետերով կայացված որոշումն անվավեր ճանաչելու և որպես հետևանք Հայցվորի հայտը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին բավարարող գնահատելու և

վերջինիս ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել պահանջի մասին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և 127-րդ հոդվածի 4-րդ մասի պահպանմամբ, իսկ այն դատարան կրկին ներկայացված լինելու հիմքով հայցադիմումը պետք է համարել առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը` 23.05.2024 թվականին:

Հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը դատավորի աշխատակազմին էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել են 03.06.2024 թվականին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից պահպանվել են հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կցվող փաստաթղթերին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածներով առաջադրվող պահանջները:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 234.5-րդ հոդվածի 2-րդ, 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածների պահանջներով,

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Որոշումը սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց և <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

3. Թիվ ԵԴ2/3975/02/24 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտը հրապարակել ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում` 2024 թվականի հուլիսի 19-ին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր`   Անի Աթանեսյան

Digitally signed by ATANESYAN ANI 5101901431
Date: 2024.06.06 17:43:30 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մ[illegible]ություն" համակարգ`
cabinet.armlex.am